ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
"ԱՐՏԱՇԱՏ- ԿՈՄՈՒՆԱԼ
ՍՊԱՍԱՐԿՈՒՄ " ՀՈԱԿ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРАРАТСКАЯ ОБЛАСТЬ
" АРТАШАТ - КОМУНАЛ
СПАСАРКУМ " ОНТО

ք. Արտաշատ Օգոստոսի 23/62
Հեռ: (0235) 2-35-37

г. Арташат Огостосu 23/62
Тел: (0235) 2-35-37

11.08.2022թ

N 80

<<Վանդաժի>> ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Տ. Վիրաբյան

Հրագելի պարոն Վիրաբյան

27 հունիսի 2022 թվականին <<Արտաշատ-կոմունալ սպասարկում>> ՀՈԱԿ-ի և <<Վանդաժի>> ՍՊԸ-ի միջև կնքվել է <<Արտաշատ կոմունալ սպասարկում>> ՀՈԱԿ-ի կարիքների համար Արտաշատ համայնքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման ծառայությունների մատուցման N ԱՐՔԱԿՍ-ԳՀԾՁԲ-22/01 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր):

Տեղեկացնում եմ Ձեզ, որ Պայմանագրի կնքման օրվանից մինչև 10.08.2022 թվականը Պայմանագրի կատարման շրջանակներում Ձեզ է ներկայացվել 45 /քառասունհինգ/ հատ հանձնարարական, որոնցից 16 հատ հանձնարարական կամ չի կատարվել կամ կատարվել է մասնակի կամ ոչ ժամանակին:

04.07.2022 և 13.07.2022 թվականին N 71 և N 74 գրություններով տեղեկացրել եմ Ձեզ առ այն, որ Պայմանագրով ստանձնված Ձեր պարտավորությունները չեն կատարվում կամ կատարվում են ոչ ժամանակին կամ թերի, ինչը հանգեցնում է համայնքի բնակիչների զայրույթը և վրդովմունքը: Տեղեկացվել եք նաև, որ Պայմանագրի կատարման շարունակական խախտման դեպքում կդիտարկվի Պայմանագրի լուծման տարբերակը:

Ս/թ օգոստոսի 3-ին Արտաշատի համայնքապետարանում, վերոնշված խնդիրը քննարկելու նպատակով, հրավիրվել է պատասխանատու ստորաբաժանման նիստ, որին Ձեր անունից ներկայացված անձը չի ունեցել <<Վանդաժի>> ՍՊԸ-ի կողմից տրված համապատասխան լիազորագիր: Սույն գործով հրավիրված 2-րդ նիստին՝ ս/թ օգոստոսի 5-ին, Դուք մասնակցել եք անձամբ և գրավոր կերպով ներկայացրել եք Պայմանագրով նախատեսված չկատարված կամ ոչ ժամանակին կամ թերի կատարված աշխատանքների վերաբերյալ Ձեր հիմնավորումները և տեսակետները: Այդպիսով, փաստացի, Ձեր կողմից պարբերաբար խախտվել են Պայմանագրի 1-ին և 2.4.1 կետերը:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ Ձեր կողմից շարունակաբար չեն կատարվել կամ ոչ ժամանակին կամ թերի են կատարվել աշխատանքները, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետը՝ «Արտաշատ-կոմունալ սպասարկում» ՀՈԱԿ-ը որոշում է միակողմանի լուծել կնքված Պայմանագիրը:

Հայտնում եմ նաև, որ լուծման մասին ծանուցումը Պայմանգրի 7.11 կետի համաձայն կհրապարկվի WWW.procurement.am ինտերնետային կայքում, ինչպես նաև կուղարկվի Ձեր էլ. հասցեին:

Արտաշատ կոմունալ սպասարկում ՀՈԱԿ-ի տնօրեն Վ.Հովհաննիսյան